

# СОПОСТАВИТЕЛЬНАЯ ТИПОЛОГИЯ СИНТАКСИКО-СЕМАНТИЧЕСКИЙ АНАЛИЗ ВОЗВРАТНЫХ КОНСТРУКЦИЙ В АНГЛИЙСКОМ ЯЗЫКЕ (В СОПОСТАВЛЕНИИ С АРМЯНСКИМ)

Лорета Араевна Базикян

 ORCID: [0009-0007-1961-401X](https://orcid.org/0009-0007-1961-401X)  
[bazikyan.loreta@asue.am](mailto:bazikyan.loreta@asue.am)

*К.ф.н., преподаватель кафедры языков,  
Армянский государственный экономический университет,  
Ереван, Республика Армения*

## АННОТАЦИЯ

Данная работа посвящена изучению синтаксических и семантических особенностей классификации возвратных конструкций в английском и армянском языках. С помощью семантического анализа, мы выявили два основных типа конструкций с возвратными глаголами и соответствующими местоимениями: лексический и аналитический. Согласно синтаксическому подходу, в английском языке различают субъектные и объектные возвратные конструкции, которые проявляются в различных синтаксических структурах. Сопоставление вышеупомянутых конструкций с армянскими аналогами иногда выявляет некоторые сходства, однако между ними наблюдаются также определённые морфологические, структурные и классификационные различия.

**Ключевые слова:** семантический анализ, лексическая разновидность, аналитическая разновидность, субъектная возвратная конструкция, объектная возвратная конструкция, синтаксический анализ, участники ситуации.

Վերջին տասնամյակներում անգլերենի անդրադարձ կառույցները առավել հաճախ են գրավում լեզվաբանների ուշադրությունը, որը պայմանավորված է դրանց յուրատիպ կառուցվածքային և բազմաբնույթ իմաստային դրսևորումներով (Лукина С., Никитина Е., Зобнина Т., Belikova A., Faltz L., Geniusienè E., Haspelmath M., Kazenin K., Գրիգորյան Գ., Իշխանյան Ռ., Սաֆարյան Տ. և այլք): Անդրադարձության կարգը սերտորեն առնչվում է ձևաբանության, շարահյուսության, բառապաշարի և բառակազմության հետ, ինչը լեզվաբանների մեծ հետաքրքրությունն է առաջացնում՝ զանազան ուսումնասիրությունների առիթ դառնալով լեզվաբանական տարբեր ոլորտներում: Մեր կողմից կատարված անդրադարձ կառույցների շարահյուսական և իմաստաբանական ուսումնասիրությունը գլխավորապես հենված է գործառական լեզվաբանության սկզբունքների վրա:

Լեզվաբանական գրականության մեջ անդրադարձ կառույցների դասակարգման և դրանց արտահայտման շարահյուսական միջոցների վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ տեսակետներ: Այսպես, անգլերենի տեսաբանների մի մեծ խումբ տարբերակում է անդրադարձ կառույցների երկու տարբեր տեսակներ՝ **«բառային»** (*lexical / verbal strategy*) և **«վերլուծական»** (*analytic / nominal / anaphoric / periphrastic strategy*) [11: 8; 20: 40–63; 24: 307–311; 26: 451–498]: Ըստ նշյալ լեզվաբանների՝ անդրադարձ կառույցը արտահայտում է երկու մասնակցով մի գործողություն, որտեղ երկուսն էլ նույն անձն են: Անդրադարձ կառույցների **«բառային»** տեսակը արտահայտված է բուն անդրադարձ բայով իր դրսևորած անդրադարձ իմաստով, ինչպես՝ *to wash, to shave, to brush, to dress, to bathe* և այլն: Օրինակ՝

I *dressed*, had some coffee in the kitchen and went out to the garage [21: 11].

Այն կներկայացնենք հետևյալ գծապատկերով՝

## Գծապատկեր 1

*Անդրադարձ կառույցի «բառային» տեսակը*

Agent = Patient

Agent = Subject

Patient = Subject

Subject

(Agent=Գործող, Patient=Կրող, Subject=Ենթակա)

Ինչ վերաբերում է *«վերլուծական»* տարբերակին, այն հանդես է գալիս անցողական բայով և անդրադարձ դերանվամբ, ինչպես՝ *to dress oneself, to enjoy oneself*: Օրինակ՝

She had her arm in plaster, but she managed *to dress herself*, and smiled, and seemed all right [14].

Տվյալ տեսակը կներկայացնենք հետևյալ գծապատկերով՝

## Գծապատկեր 2

*Անդրադարձ կառույցի «վերլուծական» տեսակը*

Agent = Patient

Subject = Object

(Agent=Գործող, Patient=Կրող, Subject=Ենթակա, Object=Խնդիր)

Նշյալ տեսակները գրեթե նույնական են Մ. Բլոխի «*օրգանական*» և «*ոչ օրգանական*» [12: 181–182], Ն. Կոբրինայի «*լիարժեք*» և «*ոչ լիարժեք*» [7: 100–101], Վ. Նեդյալկովի «*իմաստային*» և «*ձևական*» [10: 3] և Ջ. Լայոնզի «*ներակա*» և «*արտակա*» [9: 383–384] տարբերակների հետ:

Ժամանակակից հայերենում հիմնականում առանձնացնում են երեք տեսակի անդրադարձություն [16: 177]՝ «*բառային*», «*ձևաբանական*» և «*վերլուծական*». «*Բառային*» տեսակը հանդես է գալիս անդրադարձ բայով, ընդ որում, անդրադարձ իմաստը բխում է բառային իմաստից, ինչպես՝ *բնակվել, գծվել, զբաղվել, թաքնվել, հայտնվել, հարձակվել, համարձակվել, հաշտվել, սիւլվել* և այլն: Տվյալ բայերը կազմվում են *բաղադրական –վ սոսկածանցով* և չունեն համապատասխան ոչ անդրադարձ ձև, օրինակ՝

Նոր սկսեց հասկանալ, զգալ, թե ինչո՞ւ էր ինքը այս ճեպընթացում... [1]:

He began to understand, feel why he *found himself* in that express.

Ինչպես տեսնում ենք, *հայտնվել* բայը անգլերենում համարժեք է *found himself* վերլուծական անդրադարձին:

Ինչ վերաբերում է «*ձևաբանական*» տարբերակին, այս դեպքում անցողական բայը վերածվում է անդրադարձի *–վ բայածանցի* օգնությամբ: Այն հիմնականում ընդգրկում է մարդու խնամքի հետ կապված բայեր, ինչպես՝ *լվանալ–լվացվել, սանրել–սանրվել, հագնել–հագնվել, սափրել–սափրվել, հարդարել–հարդարվել*, ինչպես նաև, անձի ներաշխարհին վերաբերող բայեր՝ *ազդել–ազդվել, բորբոքել–բորբոքվել, խառնել–խառնվել, կոտրել–կոտրվել, ջարդել–ջարդվել, վիրավորել–վիրավորվել*, օրինակ՝

ա) Նրանց արգելել էին փոխել զգեստը, *լվացվել, սափրվել* [1]:

They were forbidden to change their clothes, *to wash, to shave*.

բ) Գևորգն այնքան է *ազդվել*, նրա վրա բարկանալն ավելորդ է [1]:

George *was so upset* that it was unnecessary to be angry with him.

Ինչպես երևում է, (ա) տարբերակում՝ հայերենի *լվացվել, սափրվել* անդրադարձ բայերը ներկայացված են անգլերենի *to wash, to shave* համապատասխան բայերով, որոնք իմաստային առումով համարժեք են, սակայն ձևաբանորեն տարբերվում են -վ ածանցով: Ինչ վերաբերում է (բ) օրինակին, *ազդվել* անդրադարձ բայը անգլերենում փոխանցվում է բաղադրյալ անվանական ստորոգյալով՝ *was so upset*:

Երրորդ տեսակը՝ **«վերլուծական» անդրադարձությունը**, ներկայացված է ներգործական սեռի բայերով սաստկական դերանունների գուգակցությամբ՝ *ինքս, ինքդ, ինքը, իրեն* և այլն: Օրինակ՝

Նա ժամանակին կարողացավ *զսպել իրեն* [1]:

He managed *to restrain himself* in time.

Վերոնշյալ օրինակներից պարզ է դառնում, որ հայերենի *զսպել իրեն* վերլուծական անդրադարձը համարժեք է անգլերենի *to restrain himself* համապատասխան անդրադարձին, թեպետ առաջինը արտահայտված է անձնական, իսկ երկրորդը՝ անդրադարձ դերանվամբ:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում նշյալ տարբեր դասակարգումներից կարող ենք առանձնացնել անդրադարձության երկու հիմնական տեսակ՝ *բառային* և *վերլուծական*, ընդ որում, ի տարբերություն անգլերենի, որտեղ բառային տեսակը զուրկ է որևէ ձևաբանական ցուցչից, հայերենում վերջինս կազմվում է -վ ածանցով: Ինչ վերաբերում է անդրադարձ դերանուններին, որոնք առկա են անգլերենի վերլուծական տեսակի կառույցներում, հայերենում դրանց համարժեք են հայցական հոլովով դրված անձնական դերանունները: Ինչպես տեսնում ենք, անգլերենի և հայերենի անդրադարձ կառույցները ունեն նմանություն՝ իմաստային և կառուցվածքային առումներով, մինչդեռ ձևաբանորեն դրանք տարբերվում են:

Անգլերենում անդրադարձ կառույցները ներկայացված են երեք հիմնական մակարդակներում՝ *իմաստային (semantic)*, *շարահյուսական (syntactic)* և *վերաբերային (referential)*, որոնք սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ: Իմաստային մակարդակը ենթադրում է անդրադարձ իրադրության մասնակիցների իմաստային դերերի բաշխում՝ Գործող (Agent), Կրող (Patient), Փորձառու (Experiencer), Շահառու (Beneficient) և այլն: Շարահյուսական կառույցներում իրադրության մասնակիցները մեկնաբանվում են շարահյուսական եզրերով, ինչպես՝ Ենթակա (Subject), Խնդիր (Object) և այլն: Վերաբերային կառույցներում գործ ունենք անդրադարձ բայերի իմաստային վերաբերյալների՝ իրադրության մասնակիցների (շնչավոր կամ անշունչ առարկաներ) և մասնական վերաբերյալների (Partitive) հետ:

Շարահյուսական մակարդակում տեղ է գտել ինչպես անդրադարձ կառույցների բառային, այնպես էլ՝ վերլուծական տեսակը: Այսպես, անգլերենում տարբերակում են անդրադարձ կառույցների երեք ենթախումբ՝ կախված դրանց իմաստային արժույթներից և համապատասխան անցողական բայից [16: 348; 19: 188]՝

**1. Ենթակայական Անդրադարձներ (Subjective Reflexives)**, երբ անդրադարձ բայի առաջին իմաստային արժույթը (ենթական)՝ անձնանիշ գոյականը, համապատասխանում է ոչ անդրադարձ բայի առաջին իմաստային արժույթին (ենթակային), ինչը նվազեցնում է ուղիղ խնդրի շարահյուսական պաշտոնը, օրինակ՝

*He lifted her in bed and listened.*

*He lifted himself in bed and listened* [13: 82].

*Նստեց* անկողնում և ականջ դրեց [2: 83]:

Ինչպես տեսնում ենք, հայերենում տվյալ տեսակը նույնպես առկա է:

**2. Խնդրային Անդրադարձներ** (*Objective Reflexives*), երբ անդրադարձ բայի առաջին իմաստային արժույթը (ենթական) համապատասխանում է ոչ անդրադարձ, անցողական բայի երկրորդ իմաստային արժույթին (ուղիղ խնդրին), որն արտահայտված է անշունչ առարկայով: Այստեղ նախադասության ենթական սղվում է, իսկ վերջինիս շարահյուսական պաշտոնը ստանձնում է ուղիղ խնդիրը:

He presented *an opportunity*.

It was not long before *an opportunity presented itself* [22: 89].

Բավական ժամանակ անցավ, մինչև *հարմար առիթ ներկայացավ* [4: 107]:

Տվյալ տեսակը նույնպես իր արտացոլումն է գտնում հայերենում, սակայն այստեղ ենթական ստանձնում է ուղիղ և անուղղակի խնդիրների պաշտոնները և կարող է արտահայտված լինել և՛ անշունչ, և՛ շնչավոր առարկաներով:

**3. Անցողական Անդրադարձներ՝ տրական հոլովով** (*Dative Transitive Reflexives*), երբ անդրադարձ բայի առաջին իմաստային արժույթը (ենթական), արտահայտված անձնանիշ գոյականով, համապատասխանում է ոչ անդրադարձ բայի առաջին իմաստային արժույթին (ենթակային), իսկ անդրադարձ դերանունը ստանձնում է անուղղակի խնդրի շարահյուսական պաշտոնը: Օրինակ՝

Rinaldi *poured me* another glass of the cognac.

Rinaldi *poured himself* another glass of the cognac [21: 49].

Ռինալդին լցրեց իր բաժակը [3: 61]:

Ակնհայտ է, որ տվյալ տեսակը չի գտնում իր արտահայտությունը հայերենում:

Հարկ է նշել, որ ժամանակակից անգլերենում երկրորդ և երրորդ տեսակները կենսունակ չեն, հետևապես, ստորև կանդրադառնանք միայն առաջին տեսակին:

1. **Ենթակայական անդրադարձները** բաժանվում են երեք ենթախմբի՝

- **շարահյուսական անդրադարձներ** (*Syntactic Reflexives*),
- **մասնական անդրադարձներ** (*Partitive-object Reflexives*),
- **ինքնապատճառական անդրադարձներ** (*Autocausative Reflexives*):

**Ա) Շարահյուսական Անդրադարձները** հանդես են գալիս հատուկ շարահյուսական կազմություններով, որտեղ առավել հաճախ են գործածվում հետևյալ կառույցները՝

**1. Գործող-կրող կառույցը** (*Agent-Patient structure*), որտեղ ենթական և խնդիրը միևնույն անձն է: Վերջինս ընդգրկում է հիմնականում *ֆիզիկական օգուտ կամ վնաս հասցնելու* բայիմաստները, ինչպես՝ *to kick oneself* – ինքն իրեն հարվածել, *to kill oneself* – կործանվել, *to disable oneself* – ազատվել, *to defend oneself* – պաշտպանվել, *to hurt oneself* – վնասվել, *to dust oneself* – փռշուրվել, *to shoot oneself* – կրակել իրեն, *to arm oneself* – զինվել, *to commit oneself* – վարկաբեկվել, *to deny oneself* – զրկվել, *to impose oneself* – պարտադրվել, *to sacrifice oneself* – իրեն զոհաբերել, *to embarrass oneself* – նեղվել, *to strike oneself* – իրեն խփել, *to rope oneself* – պարանով կապվել և այլն: Օրինակ՝

‘Miss Van Campen,’ did you ever know a man who tried *to disable himself* by *kicking himself* in the privates?’ [21: 101].

– Միսս Վան Քամփն, – ասացի ես, – դուք երբևիցե տեսել եք մի մարդու, որը զինձառայությունից *ազատվելու* համար, *քաջով տա* իր ամորձիքին [3: 150]:

Տվյալ բայիմաստները հայերենում համարժեք են -վ ածանցով անդրադարձ բայերին, ինչպես նաև հարադիր և *իրեն* անձնական դերանվան համակցությամբ ներգործական բայերին:



**2. Գործող-կրող-գործիք կառույցը** (*Agent-Patient-Instrument structure*), որտեղ ենթական և խնդիրը միևնույն անձն է, ընդ որում, գործիքը հանդես է գալիս որպես նախդրավոր խնդիր: Նշյալ տեսակը ընդգրկում է հետևյալ բայիմաստները՝

**ա) հոգեկան վնաս հասցնելու իմաստ**, ինչպես՝ *to accuse oneself (of smth) – ինքն իրեն մեղադրել (որևէ բանում)*, *to blame oneself (for smth) – ինքն իրեն մեղադրել (որևէ բանի համար)*, *to betray oneself (for sb/smith.) – մատնել իրեն (որևէ մեկի/որևէ բանի համար)*, *to despise oneself (for smth.) – անարգել իրեն (որևէ բանի համար)*, *to distrust oneself (with smth.) – չվստահել իրեն (որևէ բանի համար)*, *to fool oneself (by doing sth) – խաբվել (որևէ բանով)*, *to perjure oneself (in smth) – սուտ երդվել (որևէ բանում)*, *to humiliate oneself (by doing smth) – ստորանալ (որևէ բան անելու համար)*, *to hate oneself (for smth) – ատել ինքն իրեն (որևէ բանի համար)*, *to hurt oneself (by smth) – վիրավորվել (որևէ բանից)*, *to reproach oneself (with smth) – ինքն իրեն նախատել (որևէ բանի համար)*, *to strain oneself (on smth) – լարվել (որևէ բանի համար)* և այլն: Օրինակ՝

*She reproached herself* bitterly for all the unkind things she had for so long been thinking of him [22: 58].

Նա մտքում դառնորեն *նախատում էր ինքն իրեն*, որ այդքան ժամանակ ինչպես հարկն է չի ճանաչել նրան [4: 66]:

Անգլերենի վերլուծական տեսակը հայերենում համարժեք է -վ ածանցով կազմված ներքին անդրադարձ բայերին և *իրեն* անձնական դերանվան համակցությամբ ներգործական բայերին:

**բ) հաճույք կամ գոհունակություն արտահայտող իմաստ**, ինչպես՝ *to admire oneself (for smth) – ինքն իրենով հիանալ (որևէ բանի համար)*, *to amuse oneself (for smth) – զվարճանալ (որևէ բանով)*, *to content oneself (with smth) – բավարարվել (որևէ բանով)*, *to enjoy oneself*

(with smth) – քափականություն ստանալ (որևէ բանից), to excite oneself (by smth.) – հուզվել (որևէ բանից), to flatter oneself (by smth) – պարծենալ (որևէ բանով), to trust oneself (to smth) – վստահել իրեն (որևէ բանին) և այլն: Օրինակ՝

The only way I could even half *enjoy myself* dragging her around was if I *amused myself* a little [25: 90].

Հարկավոր էր ինչ-որ բան *նախաձեռնել*, որպեսզի նրան քարշ տալն այդքան *ձանձրալի չլիներ* [5: 81]:

Անգլերենի անդրադարձներին հայերենում համարժեք է ներգործական բայը կամ ներգործական բայն ու անձնական դերանվան դիմալին ենթատեսակը:

**3. Գործող-կրող-նպատակ կառույցի (Agent-Patient-Goal Structure)** ենթական և խնդիրը հանդես են գալիս շնչավոր առարկայով և կազմում տարբեր խնդրային կառույցներ՝ ստորոգելիական վերադրով խնդրային կառույց (*The Objective Predicative Construction*), դերբայական խնդրային կառույց (*The Objective Participial Construction*), անորոշ դերբայով խնդրային կառույց (*The Objective with the Infinitive Construction*): Այս կառույցներում տեղ են գտել հետևյալ բայիմաստները՝

**ա) մտավոր գործընթաց ցույց տվող բայեր**, ինչպես՝ *to consider oneself (smart) – իրեն (խելացի) համարել*, *to count oneself (fortunate) – իրեն բախտավոր համարել*, *to find oneself (guilty) – իրեն (մեղավոր) ճանաչել*, *to call oneself (an artist) – իրեն (նկարիչ) անվանել*, *to hear oneself (talk) – լսել ինքդ քեզ (խոսելիս)*, *to appoint oneself (chairman) – նշանակել իրեն (նախագահ)*, *to admit oneself (to be mistaken) – ընդունել (իբրև սխալվել է)*, *fancy oneself (as a singer) – իրեն պատկերացնել (որպես երգիչ)* և այլն: Օրինակ՝

*Consider yourself too smart, too brilliant, for that to happen* [23: 8].

*Պատկերացրու քեզ խելացի, փայլուն, որ դա իրականանա:*

If I go with my troubles to Mr. Salisbury, *I admit myself to have been mistaken* [27: 403].

Եթե գնամ խնդիրներովս հանդերձ Պն. Սելիսբուրի մոտ, ապա կընդունեն՝ որ սխալվել եմ:

Անգլերենի անդրադարձներին հայերենում համարժեք է ներգործական բայը կամ ներգործական բայն ու անձնական դերանվան դիմա- յին ենթատեսակը:

**բ) բառային պատճառականներ** (*lexical causatives*), ինչպես՝ *to convince oneself (to do smth) – իրեն համոզել (որևէ բան անել)*, *to bring oneself (to do smth) – հավաքվել (որևէ բան անելու համար)*, *to force oneself (to do smth) – իրեն ստիպել (որևէ բան անել)*, *to hold oneself (responsible) – իրեն պատասխանատվության ենթարկել*, *to set oneself (free) – ազատվել*, *to make oneself (useful) – օգուտ տալ* և այլն: Օրինակ՝

*She set herself to be as gracious as she knew how* [22: 80].

Ջուլիան *որոշեց* այնպես *սիրալիք վարվել* հետը, ինչպես միայն ինքը կարող է [4: 95]:

Հայերենում այս տեսակին համարժեք են ներգործական և պատ- ճառական բայերը, ներգործական բայն ու անձնական դերանվան դի- մային ենթատեսակը:

Վերոնշյալ խմբի մեջ կարող ենք ընդգրկել նաև **«թաքնված նա- խադասությանը անդրադարձությունը»** (*trans-clause reflexivisation*), երբ երկրորդական նախադասության ենթական դառնում է խնդրային կա- ոույցի ստորոգելիական վերադիր [15: 23], ինչպես՝ *to prove oneself (a hero) – իրեն (հերոս) ապացուցել*, *to own oneself (indebted) – իրեն պար- տական ճանաչել*, *to feign oneself (to be mad) – իրեն (խելագար) ձևաց- անել*, *to confess oneself (to be guilty) – իրեն մեղավոր խոստովանել* և այլն: Օրինակ՝

*She confessed that she is guilty.*

*She confessed herself to be guilty.*

Նա խոստովանեց, որ մեղավոր է:

Հայերենում երկու կառույցներն էլ նույն ձևով են ներկայացվում՝ երկրորդական նախադասության միջոցով:

**Բ) Մասնական Անդրադարձները (Partitive-object Reflexives)** կիրառվում են որպես *փոխանունություն (metonymy)*, երբ անդրադարձ դերանվամբ արտահայտված ուղիղ խնդիրը ենթադրում է *ենթակայի անքակտելի մաս (inalienable possession)* [19: 195]: Նշյալ տեսակը ընդգրկում է հետևյալ իմաստային խմբերը՝

**ա) մարմնական վնասվածք ստանալու իմաստ**, ինչպես՝ *to prick oneself (to prick one's finger) – ծակծկվել (ծակել մատը), to cut oneself (to cut one's hand) – վիրավորվել (կտրել ձեռքը), to burn oneself (to burn one's finger) – վառվել (վառել մատը), to bruise oneself (to bruise one's leg) – վնասվել (կապտացնել ոտքը), to scratch oneself (to scratch one's head) – քերծվել (քերծել գլուխը)* և այլն: Օրինակ՝

...the guy I like best in the Bible, next to Jesus, was that lunatic and all, that lived in the tombs and kept *cutting himself* with stones [25: 113].

...Քրիստոսից հետո ես Աստվածաշնչից սիրում եմ այն խենթուկին, ով ապրում էր քարանձավում ու ամբողջ ժամանակ *իրեն ճանկոտում* էր քարերով [5: 106]:

**բ) ինքնարտահայտման կամ իրեն ներկայացնելու իմաստ**, ինչպես՝ *to advertise oneself (one's ideas) – ինքն իրեն գովազդել (գովազդել մտքերը), to express oneself (one's opinion) – արտահայտվել (արտահայտել կարծիքը), to introduce oneself (one's speech) – ներկայանալ (ներկայացնել իր խոսքը), to identify oneself (one's personality) – ինքնությունը ներկայացնել, to market oneself (one's ideas) – ինքն իրեն վաճառել (վաճառել իր գաղափարները), to present oneself (one's thoughts) – ներկայանալ (ներկայացնել իր մտքերը), to show oneself (one's figure) – իրեն*

ցույց տալ (ի ցույց դնել կազմվածքը), *to excuse oneself* (one's behavior) – ներողություն խնդրել (ներողություն խնդրել իր վարքագծի համար), *to conduct oneself* (one's behaviour) – իրեն պահել (վարքագիծը պահել), *to controle oneself* (one's anger) – իրեն տիրապետել (վերահսկել մեկի զայրույթը), *to correct oneself* (one's words) – իր սխալները ուղղել (քառերը ուղղել) և այլն: Օրինակ՝

Almost at the moment when Mr. Gatsby *identified himself*, a butler hurried towards him... He *excused himself* with a small bow that included each of us in turn [18: 44].

Հենց այդ վայրկյանին, երբ Գեթսբին *հայտնեց իր ով լինելը*, մոտ վազեց ծառան... Գեթսբին *ներողություն խնդրեց* թեթևակի խոնարհությամբ, որը բոլորին էր վերաբերում [6: 42]:

Հայերենում նշյալ տեսակին համարժեք են ներգործական կամ չեզոք սեռի բայերը, հարադիր բայերը և անձնական դերանվան դիմային ենթատեսակը:

**Գ) Ինքնապատճառական Անդրադարձները (Autocausative Reflexives)** ցույց են տալիս մի անանցողական իրադրություն, որտեղ անձով արտահայտված գործողը դառնում է իր իսկ շարժիչ ուժը (Actor) և ենթարկվում վիճակի փոփոխության: Այն ընդգրկում է հետևյալ իմաստային ենթախմբերը՝

**ա) մի վիճակից կամ դիրքից մյուսը փոխակերպվելու իմաստ**, ինչպես՝ *to seat oneself* – տեղավորվել, *to balance oneself* – իրեն հավասարակշռել, *to throw oneself* – նետվել, *to drag oneself* – քարշ տալ իրեն, *to hide oneself* – թաքնվել, *to raise oneself* – բարձրանալ, *to cast oneself* – նետվել, *to fling oneself* – նետվել, *to stretch oneself* – ձգվել, *to remove oneself* – հեռանալ, *to thrust oneself* – զգվել և այլն: Օրինակ՝

Mr McKisco drew a long breath, *flung himself* into the shallows and began a stiff-armed batting of the Mediterranean... [17: 39].

Պարոն ՄըքՔիսթոն խոր շունչ քաշեց, *գգեց իրեն* ծանծաղուտների մեջ ու սկսեց բազուկներով ցից-ցից հարվածել Միջերկրականի ջրերին... [6: 205]:

բ) *ինքնատիրապետման կամ ինքնահաստատման իմաստ*, *to adapt oneself to smth – հարմարվել որևէ բանի, to adjust oneself to smth – հարմարվել որևէ բանի, to apply oneself to smth – զբաղվել որևէ բանով, to arrange oneself for smth – իրեն կարգի բերել, to attach oneself to smth – հարել, to avail oneself of smth – օգտվել որևէ բանից, to discipline oneself – կարգապահ դառնալ, to assert oneself – պաշտպանել իր իրավունքները* և այլն: Օրինակ,

“He *adapts himself* very well to things. He really does. I mean he really knows how *to adapt himself*.” [25: 74].

– Նա շատ հեշտությամբ է *հարմարվում*: Ուզում եմ ասել՝ կարողանում է *լեզու գտնել* մարդկանց հետ [5: 63]:

Անգլերեն օրինակներից պարզ է դառնում, որ հայերենում նշյալ իմաստները արտահայտվում են տարբեր քերականական միջոցներով՝ բուն անդրադարձ կամ հարադիր բայով, ներգործական բայով և անձնական դերանվան դիմային ենթատեսակով:

Այսպիսով, հարկ է նկատել, որ ենթակայական անդրադարձները ամենագործածականն են հիշյալ երեք տեսակներից և մեծ թիվ են կազմում ժամանակակից անգլերենում: Ինչ վերաբերում է հայերենին, այստեղ տարբերությունները կարող են արտահայտվել ինչպես ձևաբանական մակարդակում, այնպես էլ՝ շարահյուսական:

Վերոնշյալ դասակարգումը զուգադրելով հայերենի հետ՝ մենք արձանագրեցինք, որ անդրադարձ բայերի երկու հիմնական տեսակները համընկնում են հայերենի հետ, թեև կան որոշակի տարբերություններ՝

**1. Ենթակայական Անդրադարձներ**ի դեպքում անդրադարձ կառույցի ենթական և խնդիրը՝ արտահայտված շնչավոր առարկայով, միննույն անձն է, ինչպես՝

Երիտասարդը *սափրվեց, լվացվեց, սանրվեց, հագնվեց* և դուրս եկավ գրոսնելու [մեր օրինակն է]:

Այնուամենայնիվ, հայերենում լեզվաբանները տվյալ խմբում երբեմն ընդգրկում են *պատճառական անդրադարձ բայերը* (*causative reflexive verbs*), երբ առաջին արժույթը (գործողը) և գործողության կրողը համընկնում են: Տվյալ պատճառական անդրադարձ կառույցի գործողը (ենթական) կարող է լինել բացահայտ և կիրառվել տեղային գործողի դերում (locative argument) [8: 86]: Հայերենում -վ ածանցով նշյալ իմաստը նույնացվում է կրավորական անդրադարձ տեսակին (Passive Reflexive): Համեմատենք՝

ա) Տարեց մարդը *բուժվեց* չինացի բժիշկի կողմից:

The old man *was healed* by the Chinese doctor.

բ) Տարեց մարդն *ինքն իրեն բուժեց* չինական դեղերով:

The aged man *healed himself* with Chinese drugs.

Երկու լեզուներում էլ (ա) տարբերակը դիտվում է որպես կրավորական կառույց, մինչդեռ (բ)-ն՝ որպես վերլուծական անդրադարձ, ընդ որում, առանց համատեքստի առաջինն ավելի ընդունելի է խոսքում:

**2. Խնդրային Անդրադարձներ**ի դեպքում ենթական ստանձնում է ուղիղ և անուղղակի խնդիրների պաշտոնները և կարող է արտահայտված լինել և՛ անշունչ, և՛ շնչավոր առարկաներով: Տվյալ խմբի մեջ լեզվաբանները հաճախ ներառում են՝

ա) *ապապատճառական անդրադարձները* (*Decausative Reflexives*), որոնք ունեն տեղափոխության իմաստ [19: 353], ինչպես՝ *խմբվել* – to group, *կուտակվել* – to accumulate, *հավաքվել* – to gather, *միախառնվել* – intermingle, *խմբվել* – to swarm, *համախմբվել* – to unite, *բաժանվել*

– *to separate*, *պաշտպանվել* – *to defend*, *տեղավորվել* – *to nestle* և այլն, օրինակ՝

Արդեն բավական ջարդված փայտ էր *հավաքվել* [1]:

Բեկորներն ուղղակի կպել են իրար ու չեն ուզում *բաժանվել* [1]:

**բ) միտումնավոր կամ ոչ միտումնավոր գործողություն ցույց տվող անդրադարձներ** (*Intentional / Converse reflexives*), որոնք վերաբերում են անձի զգացմունքներին, հույզերին, ինչպես՝ *բավարարվել* – *to be satisfied*, *զմայլվել* – *to be delighted*, *համոզվել* – *to ascertain*, *հակառակվել* – *to oppose*, *հետաքրքրվել* – *to be interested* և այլն, օրինակ՝

Միևնույն ժամանակ, ակամա *հետաքրքրվել էր* երիտասարդի զգացումներով և ուզում էր լսել նրան [1]:

Նա կատարյալ *զմայլվել էր* այս ճանապարհորդությունից [1]:

**գ) բացարձակ անդրադարձ բայեր** (*Absolute reflexive verbs*), որոնք ունեն ավելի քան մեկ լրացում [8: 103], ինչպես՝ *տարբերվել*, *զանազանվել* – *to differ*, *կապված լինել* – *to be connected*, *հավասարվել* – *to be equal to*, *արտահայտվել* – *to express oneself*, օրինակ՝

Եվպատորի դուստրն ամեն ինչում աշխատել է *տարբերվել* [1]:

Ոչ մի բանի մասին չպետք է վստահորեն *արտահայտվել* [1]:

Ակնհայտ է, որ հիշյալ լեզուներում ենթակայական տեսակը համընկնում է, մինչդեռ խնդրային անդրադարձների որոշ ենթատեսակներ բացակայում են անգլերենում:

Այսպիսով, ամփոփելով ներկայացված նյութը, կարող ենք փաստել, որ անգլերենի և հայերենի անդրադարձները ունեն ձևաբանական, կառուցվածքային և դասակարգային տարբերություններ, ինչը պայմանավորված է տվյալ լեզուների ձևաբանական, շարահյուսական և իմաստային առանձնահատկություններով: Շարահյուսական մակարդակում անգլերենի ենթակայական և խնդրային անդրադարձների գուգադրումը հայերենի հետ երբեմն հանգեցնում է որոշ ընդհանրությունների,



թեն կան որոշակի ձևաբանական, կառուցվածքային և դասակարգային տարբերություններ:

## ЛИТЕРАТУРА

1. Արևելահայերենի ազգային կորպուս (ԱՐԵՎԱԿ) [Էլեկտրոնային ռեսուրս]: – Հասանելիության ռեժիմ՝ [http://www.eanc.net/EANC/search/?interface\\_language=am/](http://www.eanc.net/EANC/search/?interface_language=am/) (Դիմելու ամսաթիվ՝ 25.10.2025թ.):
2. *Բրեդբրի Բ.* Մարսյան քրոնիկոն, Վեպ: – Երևան, «Անտարես», 2015: – 300 էջ:
3. *Հեմինգուեյ Է.* Հրաժեշտ զենքին: – Երևան, «Հայաստան», 1972: – 300 էջ:
4. *Մոեմ Լ. Թատրոն, Վեպ (Անգլ. թարգ. Ջ. Հովհաննիսյան):* – Երևան, «Սովետ. Գրող», 1985: – 264 էջ:
5. *Սելինջեր Ջ.* Տարեկանի արտում՝ անդունդի եզրին: – Երևան, «Սով.Գրող», 1978: – 376 էջ:
6. *Ֆիցջերալդ Ֆ. Ս.* Մեծն Գեթսբի, Վեպ, Գիշերն անույշ է, Սիրավեպ: – Երևան, «Սովետ. Գրող», 1981: – 480 էջ:
7. *Кобрина Н.А.* Теоретическая грамматика современного английского языка: учебное пособие для студентов, аспирантов, преподавателей высших учебных заведений / Н.А. Кобрина, Н.Н. Болдырев, А.А. Худяков. – М.: Высшая школа, 2007. – 368 с.
8. *Козинцева Н.А.* Рефлексивные глаголы в армянском языке // Залоговые конструкции в разноструктурных языках; отв. ред. В.С. Храковский. – Л.: Наука (Ленингр. отд-ние), 1981. – СС. 81–98.
9. *Лайонз Дж.* Введение в теоретическую лингвистику / Пер. с англ. яз. под ред. и с предисл. В.А. Звегинцева. – М.: Прогресс, 1978. – 543 с.
10. *Недялков В.П., Генюшене Э.Ш.* Рефлексивные конструкции в балтийских языках и типологическая анкета. Рефлексивные глаголы в индоевропейских языках. – Калинин: Изд-во Калининского гос. ун-та, 1985. – СС. 3–19.
11. *Belikova A.* Getting L2 Reflexive and Reciprocal Verbs Right. Ph.D. dissertation. – Montreal, McGill University, 2013. – 292 p.
12. *Blokh M.* A course in Theoretical English Grammar. – Moscow: Visshaya shkola, 2000. – 380 p.
13. *Bradbury R.* The martian chronicals. – Saint Petersburg: Karo, 2015. – 320 p.
14. British National Corpus (BNC) [Electronic resource]. – Mode of access: <https://www.english-corpora.org/bnc/> (Date of access: Oct 23, 2025).

15. *Cantrall W.R.* Viepoint, reflexives, and the nature of noun phrases (*Janua Linguarum*). – The Hague; Paris: Mouton, 1974. – 178 p.
16. *Dum-Tragut J.* Armenian: Modern Eastern Armenian. – Amsterdam: Benjamins, 2009. – 742 p.
17. *Fitzgerald F. Scott.* Tender is the night. – Moscow: Raduga Publishers, 1983. – 400 p.
18. *Fitzgerald F. Scott.* The Great Gatsby. – Oxford: Heinemann New Windmills, 1987. – 191 p.
19. *Geniusienè E.* The typology of reflexives. – Berlin: Mouton de Gruyter, 1987. – 431 p.
20. *Haspelmath M.* A Frequentist explanation of some universals of reflexive marking // *Linguistic Discovery*, 2008, Vol. 6, Issue 1. – PP. 40–63 [Electronic resource]. – Mode of access: <https://www.researchgate.net/publication/40853572/> (Date of access: Oct 23, 2025).
21. *Hemingway E.* A Farewell to Arms. – Leningrad: Prosveshcheniye, 1971. – 264 p.
22. *Maugham S.* Theatre. – Moscow: Visshaya shkola, 1985. – 223 p.
23. *Murphy J.* Mental Poisons and their Antidots. – USA: Xlibris Corporation, 2009. – 221 p.
24. *Payne Th.* Understanding English Grammar: A Linguistic Introduction. – Cambridge: Cambridge University Press, 2011. – 433 p.
25. *Salinger J.* The Catcher in the Rye. – Moscow: Progress Publishers, 1968. – 248 p.
26. *Siloni T.* The syntax of reciprocal verbs // *Reciprocals and Reflexives: Theoretical and Typological Explorations*, König E. and Gast V. (eds.). – Berlin: Mouton de Gruyter, 2008. – PP. 451–498.
27. *Worboise E.* The House of Bondage. – London: Clarke, 1873. – 556 p.

**ԱՆԴՐԱԴԱՐՁ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԵՎ  
ԻՍՍԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ  
(ՀԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ)**

**Լ.Ա. Բազիկյան**

 **ORCID:** [0009-0007-1961-401X](https://orcid.org/0009-0007-1961-401X)  
[bazikyan.loreta@asue.am](mailto:bazikyan.loreta@asue.am)

*Բ.գ.թ., լեզուների ամբիոնի դասախոս,  
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,  
Երևան, Հայաստանի Հանրապետություն*

## ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն աշխատանքը նվիրված է անդրադարձ կառույցների շարահյուսական և իմաստային դասակարգման առանձնահատկությունների ուսումնասիրությանը անգլերենում և հայերենում: Ենթարկվելով իմաստաբանական վերլուծությանը՝ անդրադարձ բայերով և համապատասխան դերանուններով կազմված կառույցները ներկայացվում են երկու հիմնական ձևով՝ բառային և վերլուծական: Համաձայն շարահյուսական հայեցակերպի՝ անգլերենում առանձնացվում են ենթակայական և խնդրային անդրադարձներ, որոնք հանդես են գալիս զանազան շարահյուսական կառույցներով: Դրանց զուգադրումը հայերենի հետ երբեմն հանգեցնում է որոշ ընդհանրությունների, թեև կան որոշակի ձևաբանական, կառուցվածքային և դասակարգային տարբերություններ:

**Բանալի բառեր**՝ իմաստաբանական վերլուծություն, բառային տեսակ, վերլուծական տեսակ, ենթակայական անդրադարձ կառույց, խնդրային անդրադարձ կառույց, շարահյուսական վերլուծություն, իրադրության մասնակիցներ:

## SYNTACTIC AND SEMANTIC ANALYSIS OF REFLEXIVE CONSTRUCTIONS IN ENGLISH (WITH SPECIAL REFERENCE TO ARMENIAN)

**L. Bazikyan**

 **ORCID:** [0009-0007-1961-401X](https://orcid.org/0009-0007-1961-401X)  
[bazikyan.loreta@asue.am](mailto:bazikyan.loreta@asue.am)

*PhD, Lecturer at the Department of Languages,  
Armenian State University of Economics,  
Yerevan, Republic of Armenia*

## **ABSTRACT**

The present paper refers to the study of the syntactic and semantic classification features of reflexive constructions in English and Armenian. The semantic analysis shows that there are two main types of constructions formed with reflexive verbs and corresponding pronouns: lexical and analytical. According to the syntactic approach, English linguists distinguish between subjective and objective reflexives, which appear in various syntactic structures. Their comparison with Armenian counterparts sometimes reveals some similarities, although there are certain morphological, structural and classification differences.

**Keywords:** semantic analysis, lexical strategy, analytic strategy, subjective reflexive, objective reflexive, syntactic analysis, participants of the situation.

### ***Информация о статье:***

*статья поступила в редакцию 28 октября 2025 г.,  
подписана к печати в номер 16 (20) / 2025 – 20.12.2025 г.*